

պէս երկուսի արձանագրութեանց վերայ եւս փորագրուեցան<sup>1)</sup>։

Չմուսացան եւ իրենց Ազուանից աշխարհի մէջ գտնուած երբեմն հուշակաւոր վանքը զարգարելու, այն է Սաղիանի սուրբ Սահփաննոսի վանքը։

Չեւ ասում այն մեծ եւ սրգիական քաղցր հիւրասիրութիւնը, զոր անցեալ (1888) տարի մատուցին Վեհափառ Հայրապետին ազգիս, որ հայրագործով այցելութեամբ շնորհ բերեց ի Բագու, ինչպէս Հայ աշխարհն իմացաւ եւ «Արարատ» ամսագիրն մանրապատում նկարագրեց եւ բոլոր ազգային լրագիրք զրեցին։

Յիրաւի Բագուն եւ մանաւանդ բազուեցի հայր անցեալ 1888 թուին կրկին նշանաւոր հանդէսներով եւ երկու բարձրագոյն շնորհածաւալ այցելուներով ուրախացան. միեւնոյն թուի հոկտեմբեր ամսի 9 — 11 Օգոստոսափառ Ալէքսանդր Գ. Կայսրն ամենայն Ռուսաց եղաւ Բագուի մէջ։

Նոյն հոկտեմբերի 22 — 25 Վեհափառ Մակար Կաթողիկոսն ամենայն Հայոց գտնուեցաւ Բագուի մէջ այցելութեամբ ժողովրդոց<sup>2)</sup>։

## Բ Ա. Գ ՈՒ Ի Ք Ա. Ղ Ա. Ք

**Բ**ագուի անունը պատմութեան մէջ երեւում է շատ վաղուց՝ մինչեւ 1500 տարի առաջ։

Մեր Մովսէս Խորենացու աշխարհագրութեան մէջ Ազուանից 12 նահանգների կարգումն երեւում է եւ Բագուն «Բագաւան» անուամբ։ Երեւում է եւ կրակոտ երկիրը «Նօթնփորակեան Բագինք» անուամբ, որ այժմ ասում է Սուրախանի եւ կըրակի բոցը այժմ եւս բարձրանում է գետնից, երբ քանի սա-

<sup>1)</sup>Տես զբքիս յետագայ երեսների մէջ։

<sup>2)</sup>Տ. Մակար Վեհ. Կաթողիկոսի Բագու գալու նկարագրութիւնը գրուած է զբքիս Բագուի տեղագրութեան մէջ։